ArmLur.am

ISSN 1829-2763

ՕՐԱԹԵՐԹ ԲՈԼՈՐԻ ԵՎ ԱՄԵՆ ԻՆՉԻ ՄԱՍԻՆ

Ժողովուրդ

16 ապրիլի հինգշաբթի 2026
տպագրության ԺԵ տարի

47
(3256)

100 դրամ

քաղ. Երեւան, Աբովյան 22ա/3 (0010) + 374 10 546423 info.armlur@gmail.com, info.zhoghovurd@gmail.com

ՓՈՍԵՐԻ ՏԱԿ ՄՆԱՑԱԾ ՎԱՐԿԱՆԻՇ

Երեւանի քաղաքային իշխանության ներսում նյարդային մթնոլորտ է: ՔՊ-ում հարցումներով փորձում են հասկանալ, թե ինչպես անել, որ մայրաքաղաքում իշխանության ձայները ավելանան:

Հենց դրա համար էլ քաղաքային իշխանությունը սկսել է ավելի կոշտ աշխատել վարչական շրջանների ղեկավարների հետ՝ պահանջելով արդյունք, ձայն, ակտիվություն: Այնտեղ, որտեղ ՔՊ-ն վարչական շրջանի ղեկավար չունի, օրինակ՝ «Հանրապետություն» կուսակցությունն է կառավարում, իրենց ավելի «ուժեղներին» են գործի դրել:

«Ժողովուրդ» օրաթերթը տեղեկացավ, որ Նոր Նորքում, օրինակ, Արսեն Թորոսյանն է պատասխանատուն:

Սակայն իշխանության ներսում հենց այստեղ էլ սկսվում է լուրջ հակասությունը: Քաղաքապետարանը ճնշում է թաղապետերին, իսկ թաղապետերը հերթով արդարանում են՝ ասելով, թե այդ վարչական շրջաններում ընտրողի դժգոհության գլխավոր պատճառը ոչ թե իրենց աշխատանքն է, այլ քաղաքի վիճակը: Նրանց հիմնական փաստարկը պարզ է՝ փողոցների փոսերը, ասֆալտի խայտառակ որակը, կիսատ ու անորակ աշխատանքները դարձել են թիրախավորման առիթ, եւ այդ ամենի քաղաքական գինը հիմա փորձում են վճարել վարչական շրջանների ղեկավարների հաշվին:

Թաղապետերն էլ իրենց հերթին հասկացնում են, որ փոսի, ասֆալտի, ճանապարհաշինական խայտառակ վիճակի հետ անմիջական կապ չունեն: Այսինքն՝ ստացվում է փակ շղթա. քաղաքապետարանը ձայն է պահանջում, թաղապետերը հակադարձում են, որ քաղաքացին ամեն օր տեսնում է փոս ու փչացած ասֆալտ:

Արդյունքում ստեղծվել է մի վիճակ, երբ ՔՊ-ն փորձում է փրկել Երեւանում իր դիրքերը ոչ թե կառավարման արդյունքներով, այլ վարչական ճնշմամբ:

Կարճ ասած, այսօր Տիգրան Ավինյանը ոչ թե լուծում է տալիս խնդրին, այլ սեփական ձախողման համար մեղավորներ է փնտրում:

«Ժողովուրդ» օրաթերթը ուսումնասիրել է Տավուշի մարզպետի տեղակալ Նարեկ Ղուշչյանի ունեցվածքը: Ռուսաստանի Դաշնությունում ծնված եւ շուրջ 15 տարի վարկային ոլորտում աշխատած Նարեկ Ղուշչյանը Տավուշի մարզպետի տեղակալ է նշանակվել 2021 թվականին: Մինչ այդ նա երկար տարիներ աշխատել է Իջեւանի համայնքապետարանում, իսկ ավելի վաղ՝ մինչեւ հեղափոխությունը, «ՖԻՆՔԱ» ՈՒՎԿ-ում: «Ժողովուրդ» օրաթերթը պարզել է, որ, համաձայն փոխմարզպետի՝ 2024 թվականի անշարժ գույքի, եկամուտների, ծախսերի եւ շահերի տարեկան հայտարարագրի, Նարեկ Ղուշչյանն ունի 7 անշարժ գույք՝ 1 բնակարան, 1 անհատական բնակելի տուն եւ 5 հողամաս: Նրա գույքերը գտնվում են Տավուշի մարզի Իջեւան եւ Սեւքար համայնքներում: Փոխմարզպետը 2012 թվականից շահագործում է 2006 թվականի արտադրության AUDI մակնիշի ավտոմեքենա: Նրա բանկային հաշիվների մնացորդը կազմել է 620 հազար դրամ, իսկ կանխիկ դրամական միջոցները՝ 35 հազար դրամ:

Մանրամասները՝ ArmLur.am կայքում



Ադրբեջանը մտադրված է ակտիվորեն շահագործել Արցախի գրեթե բոլոր հանքերը: Այդ մասին է վկայում Ադրբեջանի նախագահ Իլհամ Ալիեւի ստորագրած վերջին կարգադրությունը՝ Ադրբեջանում լեռնահանքային եւ մետալուրգիական արդյունաբերության զարգացմանն ուղղված միջոցառումների մասին: Փաստաթղթում շեշտվում է, որ այս ոլորտների զարգացումն Ադրբեջանի համար ռազմավարական նշանակություն ունի, եւ հատուկ ընդգծվում է նաեւ օկուպացված Արցախի այն հանքերի շահագործումը, որոնք ժամանակին կամ չեն շահագործվել, կամ լիարժեք չեն շահագործվել: Թե ինչ հանքային պաշարներ ունի Արցախը, ինչն է արդեն շահագործվել եւ ինչի վրա կարող է կենտրոնանալ Ադրբեջանը, «Ժողովուրդ» օրաթերթի հետ բացառիկ զրույցում ներկայացրել է աշխարհագրական գիտությունների թեկնածու, դոցենտ Յուրի Առաքելյանը:

Շարունակությունը՝ ArmLur.am կայքում



Լուսանկարում ՔՊ-ական պատգամավոր Տիգրան Պարսիլյանն է, որը ակամա հիշեցնում է ՔՊ-ականի քաղաքական անցյալի մասին: 2018 թվականին այս ուժը փողոցային պայքարով կարողացավ ձեւավորել իշխանություն, սակայն այսօր շատերը ոչ միայն մոռացել են իրենց անցած ճանապարհը, այլ նաեւ հասարակության հետ վերեւից խոսող, ընդդիմությանը խրատ տվող պաշտոնյայի կերպարի մեջ են մտել: Առավել մտահոգիչ է, երբ սույն տղամարդը կանանց, այդ թվում՝ կերակրող մայրերի հասցեին անհարգալից գնահատականներ է հնչեցնում ԱԺ ամբիոնից: Հատկանշական է նաեւ, որ ՔՊ-ն իր 2026 թվականի ընտրացուցակում Տիգրան Պարսիլյանին հատկացրել է 173-րդ տեղը: Սա արդեն ոչ միայն տեխնիկական որոշում է, այլեւ քաղաքական գնահատական՝ նրա գործունեության, ազդեցության եւ իրական կշռի նկատմամբ հենց սեփական թիմի ներսում:

ՀԱՐՑԱԶՐՈՒՅՑ

«ՄԵՆՔ ԲԱՑ ԵՆՔ ՔԱՂԱՔԱՑԻՆԵՐԻ ԱՌԱՋ»

ArmLur.am-ը զրուցել է «Քաղաքացիական պայմանագիր» խմբակցության պատգամավոր Վահագն Ալեքսանյանի հետ:

- Պարոն Ալեքսանյան, նախորդ շաբաթ Ընտրական օրենսգրքում կատարված փոփոխությունները մեծ արձագանք ստացան: Ո՞րն էր պատճառը, որ այդ փոփոխությունները այսքան հապշտապ իրականացվեցին: Ընդդիմությունը պնդում է, թե դրանք ուղղված էին «Ուժեղ Հայաստան» դաշինքի դեմ: Ինչպե՞ս կմեկնաբանեք:

- Այդպիսի պնդումները, անկեղծ ասած, աբսուրդ եմ համարում: Նմանատիպ փոփոխություններ մենք արդեն կատարել էինք կուսակցությունների մասին օրենքում, այն ժամանակ, երբ ընդհանրապես որեւէ խոսք չկար Սամվել Կարապետյանի՝ քաղաքականություն մտնելու մասին: ՏԻՄ ընտրությունների ժամանակ արդեն իսկ արգելված էր, որ դաշինքների անվանումներում լինեն անձնանուններ: Նույն կանոնը պարզապես ընդլայնվեց նաեւ համապետական ընտրությունների համար: Սա բխում է ընտրական համակարգի ընդհանուր տրամաբանությունից եւ ժողովրդավարական նորմերից:

- Սակայն ընդդիմությունը հայտարարում է, որ իշխանությունն այս կերպ արտահայտում է իր վախերը:

- Ես ընդհանրապես այդ ձեւակերպումը վիրավորական եմ համարում: Ժողովրդավարական երկրում իշխանությունը կամ որեւէ քաղաքական ուժ չպետք է առաջնորդվի վախերով: Քաղաքական գործընթացները պետք է հիմնված լինեն օրենքի եւ քաղաքացու կամքի վրա, ոչ թե անձերի նկատմամբ վերաբերմունքի:

- Համապետական ընտրություններին ինչպե՞ս եք պատրաստվում ներկայանալ քաղաքացիներին, հատկապես այն ֆոնին, երբ ձեր մարզային այցելությունները հաճախ դառնում են քննարկման առարկա:

- Մենք բաց ենք քաղաքացիների առաջ: Այցելում ենք Հայաստանի գրեթե բոլոր համայնքները, եւ այդ հանդիպումները ուղիղ եթերով են լուսաբանվում: Մարդիկ տեսնում են, թե ինչ մթնոլորտում են անցնում հանդիպումները, որքան ջերմ են ընդունելությունները, ինչպես են քաղաքացիները շփվում վարչապետի եւ մեր թիմի հետ: Իհարկե, կան նաեւ ընդդիմադիր տրամադրություններ ունեցող քաղաքացիներ, ինչը լիովին նորմալ է ժողովրդավարական երկրում:

- Անդրադառնանք նաեւ Մարտի 1-ի գործին: Դուք նշել էիք, որ Արթուր Ավանեսյանը մասնակցություն է ունեցել այդ դեպքերին: Կա՞ն փաստեր:

- Մենք որեւէ մեկին առանց հիմքի չենք մեղադրում: Ինքը՝ Ավանեսյանը, իր ցուցմունքներում նշել է, որ իրեն հրամայել են ծառայությունը թողնել եւ զորախմբի կազմում գալ Երեւան: Թե ինչու էր Ղարաբաղից հատուկ ստորաբաժանում բերվում Երեւանի կենտրոն, այդ հարցերը մինչ օրս շարունակում են մնալ կարեւոր իրավական քննարկման առարկա:

- Դուք կարծո՞ւմ եք, որ Մարտի 1-ի գործը ամբողջությամբ բացահայտված է:

- Իմ գնահատմամբ՝ գործը մեծ մասամբ բացահայտված է, սակայն տարիների ընթացքում բազմաթիվ ապացույցներ կեղծվել կամ փոխարինվել են, ինչը բարդացրել է ամբողջ գործընթացը: Այդ պատճառով իրավական ընթացքը շարունակում է մնալ բավականին բարդ:

-Մտավախություն չունե՞ք, որ հունիսի 8-ից հետո կարող եք դառնալ թիվ մեկ ընդդիմությունը:

- Մեր բոլոր ծրագրերը հիմնված են մեկ սկզբունքի վրա՝ Հայաստանի Հանրապետության քաղաքացու կամքը մեզ համար օրենք է: Եթե քաղաքացին այլ որոշում կայացնի, մենք դա կընդունենք: Ժողովրդավարությունը հենց դա է նշանակում:

-Ի՞նչ հարաբերություններ ունեք Ալեն Սիմոնյանի հետ:

- Մեր հարաբերությունները շատ լավ են, կարելի է ասել՝ փայլուն: Տարիներ առաջ արված որեւէ գրառման հիման վրա այսօր քաղաքական հարաբերություններ գնահատելը, կարծում եմ, անտրամաբանական է:

Զրուցեց՝ ՆԱՆԻԿ ԱՂԱՍՅԱՆԸ

ՔԱՂԱՔԱԿԱՆ ՕՐԱԿԱՐԳ

ԱՆԴՐԱԴԱՐՁ

Ապրիլի 13-ին Ֆրանսիայում գտնվող արցախյան պատվիրակությունը Արցախի Հանրապետության Ազգային ժողովի նախագահ, Հանրապետության նախագահի պաշտոնակատար Աշոտ Դանիելյանի գլխավորությամբ այցելել է Փարիզի քաղաքապետարան, որտեղ հանդիպում է ունեցել Փարիզի փոխքաղաքապետ, միջազգային համագործակցության գծով պատասխանատու Ադրե Պուլվարի հետ:

Հանդիպման ընթացքում Աշոտ Դանիելյանը երախտագիտություն է հայտնել Փարիզի քաղաքապետարանին՝ Արցախի ժողովրդի նկատմամբ ցուցաբերված հետեւողական ուշադրության եւ աջակցության համար՝ ընդգծելով, որ այդ աջակցությունը հատկապես կարեւոր է եղել ինչպես Արցախի շրջափակման ընթացքում, այնպես էլ դրան հաջորդած ծանր եւ ողբերգական զարգացումների ժամանակահատվածում:

Կողմերը քննարկել են Բաքվում ապօրինաբար պահվող հայ գերիների ազատ արձակման հարցի շուրջ միջազգային իրազեկման եւ ճնշման մեխանիզմների ակտիվացման հնարավորությունները, ինչպես նաեւ Հայաստանում ապաստանած արցախցիների սոցիալ-տնտեսական խնդիրները եւ նրանց կարիքների հասցեական լուծման ուղիները: Առանձին անդրադարձ է կատարվել Արցախի ժողովրդի անվտանգ, արժանապատիվ եւ հավաքական վերադարձի իրավունքի իրացման կարեւորությանը: Հանդիպման ավարտին ձեռք է բերվել նախնական պայմանավորվածություն՝ առաջիկայում Երեւանում համատեղ միջոցառում կազմակերպելու վերաբերյալ: Նույն օրը պատվիրակությունն այցելել է Ալֆորվիլ քաղաք, որտեղ հանդիպում է ունեցել քաղաքապետ Լուկ Կարվոնասի, Ֆրանսիայի Ազգային ժողովի պատգամավոր Իզաբել Սանտյագոյի եւ փոխքաղաքապետ Կարո Խաչիկյանի հետ: Հանդիպման ընթացքում կողմերը բարձր են գնահատել Ալֆորվիլի քաղաքային խորհրդի եւ բնակչության կողմից տարիներ շարունակ ցուցաբերվող աջակցությունը Արցախի ժողովրդի իրավունքների եւ շահերի պաշտպանությանը՝ ընդգծելով, որ այդ աջակցությունը առանձնահատուկ նշանակություն է ունեցել նաեւ Արցախի դեմ իրականացված ագրեսիաների ընթացքում: Քննարկվել են նաեւ հետագա համագործակցության ընդլայնման եւ շարունակականության ապահովման հնարավորությունները: Հանդիպումներին մասնակցել են նաեւ Արցախի մարդու իրավունքների պաշտպան Գեղամ Ստեփանյանը, ԱԺ նախագահի խորհրդական, ՀՅԴ Արցախի ԿԿ ներկայացուցիչ Արա Պուլուզյանը եւ Արցախի թեմական խորհրդի նախագահ Լեռնիկ Հովհաննիսյանը:

ՔՆՆԱՐԿԵԼ ԵՆ

ՀՀ բարձր տեխնոլոգիական արդյունաբերության նախարար Մխիթար Հայրապետյանն ապրիլի 14-ին ընդունել է Ֆրանսիայի Հանրապետության Եվրոպայի հարցերով լիազոր նախարար Բենժամեն Հադադի գլխավորած պատվիրակությանը: Հանդիպման ընթացքում կողմերը գոհունակությամբ ընդգծել են Հայաստանի եւ Ֆրանսիայի միջեւ պատմականորեն ձեւավորված բարեկամական հարաբերություններն ու քաղաքական երկխոսության բարձր մակարդակը՝ դրանք դիտարկելով որպես ամուր հիմք տեխնոլոգիական եւ տնտեսական ոլորտներում նոր նախաձեռնությունների իրականացման համար:

ՀՅՈՒՐԸՆԿԱԼԵԼ Է

ԱԺ տարածքային կառավարման, տեղական ինքնակառավարման, գյուղատնտեսության եւ շրջակա միջավայրի պահպանության հարցերի մշտական հանձնաժողովի նախագահ Վահե Ղալումյանն ապրիլի 15-ին ընդունել է Եվրոպայի խորհրդի տեղական եւ շրջանային իշխանությունների կոնգրեսի պատվիրակությանը:

Հայաստանը Տեղական ինքնակառավարման եվրոպական խարտիան վավերացրել է 2002 թվականին, մոնիթորինգային այց եղել է 2019 թվականին: Պատվիրակության այցի նպատակն է հետեւել գնահատման առաջարկների իրականացման ընթացքին:

Վահե Ղալումյանը հյուրերին ներկայացրել է ՏԻՄ ոլորտում օրենսդրական աշխատանքների ընթացքը, առաջիկա անելիքները: Հանձնաժողովի նախագահը մանրամասնել է համայնքների միավորման գործընթացը, հետաքրքրվել ազգային փոքրամասնությունները ներկայացնող համայնքների խոշորացման հարցում գործընկերների փորձով:

Նշվել է, որ առաջիկայում կքննարկվի «Տեղական ինքնակառավարման մարմինների մասին» օրենքում փոփոխություններ նախատեսող փաթեթը, շրջանառության մեջ են նաեւ «Երեւան քաղաքում տեղական ինքնակառավարման մասին» օրենքում առաջարկվող կարգավորումները, որոնք բխում են խարտիայով ստանձնած պարտավորություններից:

Քննարկվել են նաեւ համայնքների հարկային ու ֆինանսական ինքնուրույնությանն առնչվող եւ այլ հարցեր:

Կոնգրեսում ներկայացված է անդամ 46 պետություն, մասնավորապես՝ 130.000 տեղական ինքնակառավարման մարմին է ներգրավված կոնգրեսի աշխատանքներում: Կառույցը զբաղվում է Տեղական ինքնակառավարման եվրոպական խարտիայի իրականացման ապահովմամբ:

ՄԵՂՐԻՆ՝ ՄՇԱԿՈՒԹԱՅԻՆ ՄԱՅՐԱՔԱՂԱՔ

ՀՀ ԿԳՄՍ նախարարությունից հայտնում են, որ ԱՊՀ երկրների «Մշակութային մայրաքաղաքներ» միջպետական ծրագրի շրջանակում 2026 թվականին Մեղրի քաղաքը հռչակվել է ԱՊՀ մշակութային մայրաքաղաք: Այդ կապակցությամբ ապրիլի 16-17-ը Մեղրիում եւ Ագարակում իրականացվելու են մշակութային բազմաբնույթ միջոցառումներ:

«Մեղրին՝ ԱՊՀ մշակութային մայրաքաղաք» ծրագրի շրջանակում ապրիլի 16-ին մի շարք միջոցառումներ են նախատեսված: Բացման միջոցառմանը կմասնակցեն ՀՀ պետական մարմինների ներկայացուցիչներ, ԱՊՀ անդամ երկրների պաշտոնական պատվիրակություններ եւ մշակույթի ոլորտի գործիչներ, ԱՊՀ երկրների Գործադիր կոմիտեի եւ Հումանիտար համագործակցության միջպետական հիմնադրամի ղեկավար կազմի ներկայացուցիչներ:

ԻՐԱՎԻՃԱԿ

ՀՐԱԺԱՐՎԵԼ Է

Հակակոռուպցիոն դատարանում, դատավոր Վահե Դոլմազյանի նախագահությամբ, երեկ սկսվել է միլիարդատեր եւ «Ուժեղ Հայաստան» կուսակցության առաջնորդ Սամվել Կարապետյանի վերաբերյալ քրեական գործի քննությունը: Նշվում է, որ մեղադրյալների առարկության հիմքով նիստը չի տեսանկարահանվում: Նիստի ընթացքում Սամվել Կարապետյանը պատասխանել է դատարանի կողմից տրված հարցերին՝ներկայացնելով իր անձնական տվյալները. «Ես ՀՀ քաղաքացի եմ, միաժամանակ ունեմ Ռուսաստանի եւ Կիպրոսի անձնագրեր: Վստահ լինելով առաջիկա հաղթանակի վրա՝արդեն սկսել ենք գործընթաց այդ երկրների քաղաքացիությունից հրաժարվելու ուղղությամբ»: Նա հայտնել է նաեւ, որ ունի բարձրագույն կրթություն, տնտեսագիտության դոկտորի կոչում, ամուսնացած է, ունի երեք չափահաս երեխա եւ խնամակալության տակ գտնվող անձինք չունի:

ՊՈՐՏՈՒԳԱԼԻԱՆ ԴԵՄ Է

Պորտուգալիան չի աջակցում առանձին եվրոպական բանակ ստեղծելու գաղափարին եւ կողմ է ՆԱՏՕ-ի շրջանակներում իր զինված ուժերի ամրապնդմանը եւ արդիականացմանը, ըստ պաշտպանության նախարար Նունո Մելոյի: «-Մենք չենք պաշտպանում միասնական եվրոպական բանակի գաղափարը», - ասել է պաշտպանության նախարարը խորհրդարանում ունեցած ելույթում, ինչպես մեջբերում է Reuters-ը: Նախարարի խոսքով՝ Պորտուգալիան պետք է ներդրումներ կատարի իր զինված ուժերում ՆԱՏՕ-ի առաքելությունները կատարելու նրանց կարողությունն ապահովելու համար: Պորտուգալիայի պաշտպանության նախարարը ընդգծել է, որ իր երկիրը ՆԱՏՕ-ի չափանիշներին համապատասխան մինչեւ 2025 թվականը իր պաշտպանական ծախսերը մեծացրել է մինչեւ 6.12 միլիարդ եվրո կամ ՀՆԱ-ի 2%-ը՝ նախատեսվածից չորս տարի շուտ: Իր զինված ուժերը ամրապնդելու համար Լիսաբոնը դիմել է ԵՄ-ին 5.8 միլիարդ եվրո արտոնյալ վարկերի համար: Ըստ նախարարի՝ «եթե ամեն ինչ լավ ընթանա», Պորտուգալիան մինչեւ 2030 թվականը կստանա նոր ֆրեգատներ, զրահապատ մեքենաներ, արբանյակներ եւ անօդաչու թռչող սարքեր:

ԿՈՐԵԼ Է

ԱՄՆ ռազմածովային ուժերը պաշտոնապես ընդունել են Մերձավոր Արեւելքում թանկարժեք անօդաչու թռչող սարքի (ԱԹՍ) կորուստը: Ապրիլի 9-ին կործանվել է MQ-4C Triton հետախուզական անօդաչու թռչող սարքը: Ջոհերի մասին տեղեկություններ չկան: Սակայն, գործառնական անվտանգության նկատառումներից ելնելով, վթարի վայրը չի բացահայտվում: Հասանելի տվյալների համաձայն՝MQ-4C անօդաչու թռչող սարքի արժեքը կազմում է գրեթե 240 միլիոն դոլար: Ապրիլի 9-ին հաղորդվել է, որ ամերիկյան Northrop Grumman MQ-4C Triton անօդաչու թռչող սարքը Հորմուզի նեղուցի վրայով թռչելիս աղետի ազդանշան է ուղարկել: Անօդաչու թռչող սարքը շարունակել է թռիչքը, բայց շուտով սկսել է տրանսպոնդերի խափանումներ ունենալ: Ավելի ուշ, Բահրեյնից հյուսիս, Triton-ը մի քանի րոպեում կտրուկ իջել է 16 կմ-ից մինչեւ 3 կմ: ԱԹՍ-ի տրանսպոնդերը նույնպես անջատվել է:

ԻՆՉ ՈՒՆԻ

ՋՐԱՅԻՆ ԿՈՄԻՏԵՆ ՆՈՐ ՏԵՂԱԿԱԼ ՈՒՆԻ

ArmLur.am-ը ուսումնասիրեց Ջրային կոմիտեի նորանշանակ տեղակալ Նվարդ Վարդանյանի կենսագրությունն ու ունեցվածքը:

Նվարդ Վարդանյանը նշանակվել է Ջրային կոմիտեի նախագահի տեղակալ 2026 թվականի ապրիլի 14-ին: Մինչ այդ նա աշխատել է ՀՀ արդարադատության նախարարությունում՝ որպես գլխավոր քարտուղարի տեղակալ: Այդ պաշտոնը նա ստանձնել է 2021 թվականի նոյեմբերի 29-ին: Սակայն 2023 թվականի հունվարի 13-ի հրամանով, իր դիմումի համաձայն, նրա լիազորությունները դադարեցվել են, եւ նա ազատվել է պաշտոնից 2023 թվականի հունվարի 16-ից:

ArmLur.am-ի ուսումնասիրությամբ ներկայացնում ենք նրա հայտարարագրերի ամբողջական տվյալները:

2021 թվականի հայտարարագրի տվյալներով, պաշտոնը ստանձնելու պահին Նվարդ Վարդանյանն ունեցել է 8 միավոր անշարժ գույք: Բանկային հաշիվների մնացորդները կազմել են 52,182.16 դրամ: Էլեկտրոնային հաշիվներում եւ կրիպտոարժույթով ունեցել է 400,000 դրամ: Կանխիկ միջոցները կազմել են 4,900 ԱՄՆ դոլար, 4,850 եվրո եւ 560,000 դրամ: Ստացված փոխառությունները կազմել են 11,627,214 դրամ եւ 15,909 դրամ: Վարձակալությունից ստացված եկամուտը կազմել է 450,000 դրամ: Ընդհանուր եկամուտը կազմել է 12,093,123 դրամ: Վարկային պարտավորությունը՝ անշարժ գույքի ձեռքբերման նպատակով, կազմել է 11,627,214 դրամ:

2023 թվականի հայտարարագրի տվյալներով, Նվարդ Վարդանյանի մոտ պահպանվել է նույն՝8 միավոր անշարժ գույքը:

1. ավտոկայանատեղի՝բաժնային սեփականությամբ, որտեղ հայտարարատուի բաժինը կազմում է 50 տոկոս, գտնվում է Հայաստանի Հանրապետություն Երեւան քաղաքում, ձեռք է բերվել 2019 թվականի ապրիլի 17-ին՝գնման եղանակով,

2. բնակարան՝ բազմաբնակարան բնակելի շենքում, բաժնային սեփականությամբ՝1/2 բաժնով, գտնվում է Երեւան քաղաքի Արաբկիր վարչական շրջանում, ձեռք է բերվել 2019 թվականի ապրիլի 17-ին՝գնման եղանակով,

3. ավտոկայանատեղի՝ միանձնյա սեփականությամբ, գտնվում է Երեւան քաղաքի Արաբկիր վարչական շրջանում, ձեռք է բերվել 2013 թվականի նոյեմբերի 14-ին՝գնման եղանակով,

4. բնակարան՝ բազմաբնակարան բնակելի շենքում, միանձնյա սեփականությամբ, գտնվում է Երեւան քաղաքի Արաբկիր վարչական շրջանում, ձեռք է բերվել 2013 թվականի նոյեմբերի 14-ին՝գնման եղանակով,

5. բնակարան՝ բազմաբնակարան բնակելի շենքում, միանձնյա սեփականությամբ, գտնվում է Երեւան քաղաքի Արաբկիր վարչական շրջանում, ձեռք է բերվել 2013 թվականի նոյեմբերի 14-ին՝գնման եղանակով,

6. բնակարան՝ բազմաբնակարան բնակելի շենքում, միանձնյա սեփականությամբ, գտնվում է Երեւան քաղաքի Արաբկիր վարչական շրջանում, ձեռք է բերվել 2018 թվականի ապրիլի 3-ին՝գնման եղանակով,

7. բնակարան՝ բազմաբնակարան բնակելի շենքում, միանձնյա սեփականությամբ, գտնվում է Երեւան քաղաքի Արաբկիր վարչական շրջանում, ձեռք է բերվել 2018 թ. ապրիլի 3-ին՝գնման եղանակով,

8. ավտոկայանատեղի՝ միանձնյա սեփականությամբ, գտնվում է Երեւան քաղաքի Արաբկիր վարչական շրջանում, ձեռք է բերվել 2013 թվականի նոյեմբերի 14-ին՝գնման եղանակով:

Վարդանյանը հայտարարագրել է մեկ տրանսպորտային միջոցը՝ NISSAN մակնիշի, 2015 թվականի արտադրության:

Բանկային հաշիվների մնացորդները կազմել են 287,778 դրամ: Էլեկտրոնային հաշիվներում եւ կրիպտոարժույթով առկա միջոցները կազմել են 1,159,998.8 դրամ: Կանխիկ միջոցները կազմել են 3,570 եվրո, 6,760 ԱՄՆ դոլար եւ 750,000 դրամ:

2023 թվականի հաշվետու ժամանակաշրջանի եկամուտները կազմել են 362,683 դրամ: Վարձակալությունից ստացված եկամուտը՝ Կարմիր Խաչի միջազգային կոմիտեից, կազմել է 780,000 դրամ: Աշխատավարձը՝ արդարադատության նախարարությունից, կազմել է 561,000 դրամ: Ընդհանուր եկամուտը կազմել է 1,703,683 դրամ:

Վարկային պարտավորությունը պաշտոնը դադարեցնելու օրվա դրությամբ կազմել է 10,318,010 դրամ՝ անշարժ գույքի ձեռքբերման վարկ:

Ա. ՎԱՐԴԱՆՅԱՆ

ՕՐՎԱ ԽՃԱՆԿԱՐ

ԱՐԱԳԱՑՆՈՒՄ Է

«Եվրոպական ՆԱՏՕ» ստեղծելու գաղափարը Եվրոպայում թափ է հավաքում ԱՄՆ նախագահ Դոնալդ Թրամփի կողմից դաշինքից դուրս գալու սպառնալիքների ֆոնին, հաղորդում է The Wall Street Journal-ը՝հղում անելով աղբյուրներին: Այս ծրագրերի վրա աշխատող պաշտոնյաները նպատակ ունեն դաշինքի հրամանատարական եւ վերահսկողական գործառույթներում ավելի շատ եվրոպացիների ներգրավել եւ ամերիկյան ռազմական ռեսուրսները լրացնել իրենց սեփական ռեսուրսներով: Քննարկումների մասնակիցների խոսքով՝ պահեստային ծրագիրը մշակվում է ոչ պաշտոնական եղանակով՝ Հյուսիսատլանտյան դաշինքի շրջանակներում եւ դրա շուրջ զուգահեռ քննարկումների եւ ընթրիքների ժամանակ, եւ այն նախատեսված չէ ներկայիս դաշինքի հետ մրցակցելու համար:

ՄՏԱԴԻՐ Է ՀԱՐՑԱՔՆՆԵԼ

Հունգարական Telex հրատարակության փոխանցմամբ՝Եվրոպական հանձնաժողովի նախագահ Ուրսուլա ֆոն դեր Լեյենը մտադիր է Կիպրոսում կայանալիք ԵՄ ոչ պաշտոնական գագաթնաժողովում բարձրացնել Հունգարիայի հեռացող վարչապետ Վիկտոր Օրբանի կապերի հարցը Ռուսաստանի հետ: Պարբերականը հաղորդում է, որ սա Օրբանի վերջին գագաթնաժողովն է լինելու: Եվրոպական խորհրդի նախագահ Անտուանու Կոստան արդեն հրավերներ է ուղարկել կառավարությունների եւ պետությունների ղեկավարներին հանդիպման, որի ընթացքում կքննարկվեն աշխարհաքաղաքականությունը եւ ԵՄ բյուջեն: Հոդվածում նշվում է, որ «գագաթնաժողովում կարող է առաջանալ նաեւ մեկ այլ թեմա՝ Հունգարիայի եւ Ռուսաստանի կառավարությունների միջեւ բանակցությունների շուրջ սկանդալը»: Հրատարակությունը նշում է, որ Եվրոպական հանձնաժողովի խոսնակ Պաուլա Պինյոն մտահոգություն է հայտնել հրապարակված տեղեկատվության վերաբերյալ:

ԿԱՐՈՂ ԵՆ ՄԻԱՆԱԼ

Եմենի ապստամբական «Անսար Ալլահ» (հուսիթներ) շարժումը եւ իրաքյան շիական աշխարհազորայինները կարող են ակտիվ մասնակիցներ դառնալ Իրանի, ԱՄՆ-ի եւ Իսրայելի միջեւ Հորմուզի նեղուցի ամերիկյան շրջափակման շուրջ հակամարտությանը, ասվում է CNN-ի վերլուծական հաղորդագրության մեջ: Այնտեղ նշվում է, որ նեղուցի փակումը կարող է միայն սրել հակամարտությունը: CNN-ը նշել է, որ Իրանը նախկինում հարձակվել է էներգետիկ ենթակառուցվածքների եւ ամերիկյան բազաների վրա Քաթարում եւ Սաուդյան Արաբիայում, սակայն այժմ Իրանի տարածաշրջանային դաշնակիցները, ինչպիսիք են Եմենի հուսիթները եւ իրաքյան շիական աշխարհազորայինները, կարող են «ավելի խորը» մտնել հակամարտության մեջ՝ միանալով ամերիկյան նավերի եւ տանկերների վրա հարձակումներին: Փետրվարի 28-ին ԱՄՆ-ն եւ Իսրայելը պատերազմ սկսեցին Իրանի դեմ: - Հարձակման ենթարկվեցին խոշոր քաղաքներ, այդ թվում՝ Թեհրանը: Իսլամական հեղափոխության պահապանների կորպուսը (Իրանի զինված ուժերի էլիտար ստորաբաժանումը) հայտարարեց Իսրայելի վրա հարձակվող լայնածավալ պատասխան գործողության մասին: Իրանի իշխանությունները նաեւ որոշեցին փակել Հորմուզի նեղուցը ԱՄՆ-ի, Իսրայելի եւ Իսլամական Հանրապետության դեմ ագրեսիան աջակցող երկրների հետ կապված նավերի համար:

ՀԱՄԱՁԱՅՆԵԼ ԵՆ

Լիբանանն ու Իսրայելը համաձայնել են սկսել ուղիղ երկկողմ բանակցություններ, որոնց ամսաթիվը եւ վայրը կորոշվեն ավելի ուշ: Այս մասին հայտարարել է Վաշինգտոնում Արաբական Հանրապետության դեսպան Նադա Համադեհ-Մուավադը՝ապրիլի 14-ին Պետդեպարտամենտում կայացած նախնական խորհրդակցություններից հետո: «Մենք արդյունավետ քննարկումներ ունեցանք եւ քննարկեցինք քայլերը՝ ուղիղ բանակցություններ սկսելուց առաջ: Հաջորդ հանդիպման ամսաթիվը եւ վայրը կհայտարարվեն ավելի ուշ», - ասել է դիվանագետը, ըստ Lebanon 24 լրատվական պորտալի: Համադեհ-Մուավադն ասել է, որ կոչ է արել գործնական միջոցներ ձեռնարկել՝մեղմելու լիբանանցի ժողովրդի զինված հակամարտության պատճառով շարունակաբար տառապող մարդասիրական ճգնաժամը: «Բոլոր կողմերը համաձայնել են սկսել ուղիղ բանակցություններ փոխադարձաբար համաձայնեցված ժամանակին եւ վայրում», - նշվում է Պետդեպարտամենտի փաստաթղթում:

ԱՆՈՒՆՆԵՐ

ԱՐՄԱՎԻՐՈՒՄ ՀՆՉԱԾ ԿՐԱԿՈՑՆԵՐՈՎ 2-ՐԴ ԱՆՁՆ Է ՁԵՐԲԱԿԱԼՎԵԼ

ArmLur.am-ին հասած տեղեկություններեր համաձայն՝ Արմավիրի կրակոցների գործով մեկ անձ կալանավորվել է:



Մեզ հասած տեղեկությունների համաձայն՝ Էջմիածին քաղաքի հիմնական դպրոցի հետնամասում գտնվող կիսաքանդ շինությունում հայտնաբերվել է ինքնաձիգը՝ 1 փամփշտատուփով, որի մեջ առկա են եղել թվով 36 հատ չկրակված փամփուշտներ:

Ապրիլի 12-ին Արմավիրում հնչած կրակոցների գործով քրեական հետապնդում է հարուցվել 2 անձի նկատմամբ:

ArmLur.am-ի տեղեկությունների համաձայն՝ ձերբակալվածներն են Յուրա Գալստյանը եւ Կարեն Վարդանյանը: ՀՀ քննչական կոմիտեից հայտնեցին, որ ապրիլի 12-ին Վաղարշապատում տեղի ունեցած դեպքի առթիվ նախաձեռնվել է քրեական վարույթ՝ սպանության փորձի, խուլիգանության, հրազենի ապօրինի շրջանառության հոդվածների հատկանիշներով:

Քրեական վարույթի շրջանակում 2 անձի նկատմամբ հարուցվել է հանրային քրեական հետապնդում: ArmLur.am-ի նախնական տեղեկությունների համաձայն՝ Արմավիրի կրակոցների պատճառը այն է, որ միջադեպի մասնակից կողմերը ունեն տաքսու բիզնես, ու մեքենան կայանելու տեղի հարցի շուրջ միշտ տարաձայնություններ են ունեցել, ու որոշել են հանդիպել, արդյունքում հնչել են կրակոցներ:

Արմավիրի մարզի բնակիչների խոսքով՝ վիճաբանած կողմերից մեկը Էջմիածնում Մխիթար Գազազյանն է, որը առավել հայտնի է «Բուսի Մխո» անվանմամբ, եւ Էջմիածնում հայտնի Բադալը: Ըստ Արմավիրցիների՝ այս 2 կլանների միջեւ միշտ ներքին կոնֆլիկտներ են եղել, ու ինչ-ինչ հանգամանքներում բանը իրավապահներին չի հասել: Անգամ կողմերից մեկի թիմակիցներից մեկը վերջին շրջանում միջադեպի արդյունքում կալանավորվել է:

Հիշեցնենք, որ ՆԳՆ-ից հայտնել են, որ Վաղարշապատում կրակոցների հետեւանքով տուժած անձինք չկան:- Համայնքային ոստիկանները ձերբակալել են 1 անձի, հանգամանքները պարզվում են: Իսկ ՀՀ քննչական կոմիտեից հայտնել են, որ ապրիլի 12-ին Վաղարշապատում տեղի ունեցած դեպքի առթիվ նախաձեռնվել է քրեական վարույթ՝ սպանության փորձի, խուլիգանության, հրազենի ապօրինի շրջանառության հոդվածների հատկանիշներով: Քրեական վարույթի շրջանակում 2 անձի նկատմամբ հարուցվել է հանրային քրեական հետապնդում:

ՔՆԱՐ ՄԱՆՈՒԿՅԱՆ

ԼՈՒՐԵՐ

ՄԻՋՆՈՐԴԵԼ Է ԵՐԿԱՐԱՁԳԵԼ

Դատախազը միջնորդել է Սամվել Կարապետյանի տնային կալանքի ժամկետը երկարաձգել եւս երեք ամսով: Այս մասին փոխանցում է Ազատությունը: Փաստաբան Արամ Վարդեւանյանը հայտարարեց՝ դեռ երեկ են դիմել դատարանին, որ փոխվի Կարապետյանի տնային կալանքը: Ասաց՝ իրենց համար որպեն էլ կարեւոր է, որ Սամվել Կարապետյանն ազատ արձակվի տնային կալանքից, որ կարողանան ԿԸՀ ներկայացվող ցուցակի հետ կապված աշխատանքներն անել: Փաստաբան Արամ Վարդեւանյանը, ներկայացնելով իրենց միջնորդությունը, ասաց՝ Կարապետյանը հիմա չի կարող մասնակցել ընտրացուցակի կազմմանը: Առաջիկայում համագումարն է կուսակցության, որը պետք է հաստատի ընտրացուցակի առաջին 30 անուններն ու հաջորդականությունը:

Ո՞Վ Է ԴԱՏԱՎՈՐԸ

Ո՞վ է դատավորը, որը մերժեց Հակակոռուպցիոն կոմիտեի միջնորդությունը. «Ուժեղ Հայաստան» կուսակցության ներկայացուցիչ Գոհար Ղումաշյանին տնային կալանքի չտարավ: ArmLur.am-ին հայտնի դարձավ, որ միջնորդությունը մակագրվել է Հակակոռուպցիոն դատարանի դատավոր Սարգիս Պետրոսյանին, ու նա մերժել է կոմիտեի միջնորդությունը եւ խափանման միջոց ընտրել վարչական հսկողությունը: Ի դեպ, երբ 2 ամսական երեխային դատարան են բերել, որ մայրը տեսնի, նիստը նախագահող դատավոր Սարգիս Պետրոսյանը հրահանգել է բոլորին լքել նիստերի դահլիճը, որպեսզի մայրը երեխային կաթ տա. նիստերի դահլիճից բոլորը դուրս են եկել, մայրը կաթ է տվել, որից հետո նիստը շարունակվել է:

Ք. Մ.

ԿԱՆՑԿԱՑՎԻ ՀԱՅԱՍՏԱՆՈՒՄ

2028թ. ՀՀ-ում կանցկացվի Դատախազների միջազգային ասոցիացիայի Գործադիր կոմիտեի հերթական նիստը: Այս որոշումը կայացվել է այսօր՝ Շանհայում ընթացող՝ Դատախազների միջազգային ասոցիացիայի Գործադիր կոմիտեի 61-րդ նիստի ընթացքում՝ Գործադիր կոմիտեի անդամների միաձայն որոշմամբ: Հիշեցնենք, որ Հայաստանի Հանրապետության գլխավոր դատախազ Աննա Վարդապետյանը Չինաստանի Ժողովրդական Հանրապետության Շանհայ քաղաքում մասնակցում է Դատախազների միջազգային ասոցիացիայի Գործադիր կոմիտեի 61-րդ նիստին, որի ընթացքում Աննա Վարդապետյանն ընտրվել է ԴՄԱ վերապատրաստումների ենթահանձնաժողովի անդամ:

Հիշեցնենք, որ ԴՄԱ Գործադիր կոմիտեն ԴՄԱ-ի ղեկավար եւ վարչական մարմինն է, որը կազմված է Նախագահից, փոխնախագահներից եւ 20 դատախազ անդամներից, որոնք ներկայացնում են Ավստրիայի Հանրապետությունը, Կանադան, Մեծ Բրիտանիայի եւ Հյուսիսային Իռլանդիայի Միացյալ Թագավորությունը, Շվեյցարիայի Համադաշնությունը, Ֆրանսիայի Հանրապետությունը, Քենիայի Հանրապետությունը, Ադրբեջանի Հանրապետությունը, Հունգարիան եւ այլն:

ԼՈՒՐԵՐ

ՆԱՄԱԿ Է ԹՈՂԵԼ

ArmLur.am-ի տեղեկությունների համաձայն՝ մահացած զինվորը նամակ է գրել: Մեզ հասած տեղեկությունների համաձայն՝ նամակում ներողություն է խնդրել ընկերներից, հարազատներից: Իսկ խնդիր ունեցել է նա զորամասում. հասցրե՞լ են ինքնասպանության, թե՞ սպանել են՝ այս պահին իրավապահ համակարգը քննում է:

Ապրիլի 14-ին հերթական մահվան դեպքն է տեղի ունեցել ՀՀ պաշտպանության նախարարության զորամասերից մեկում: Ժամը 16:00-ի սահմաններում զինվորական հոսպիտալ («Մուրացան») տեղափոխելու ճանապարհին զինվորը մահացել է: Աղբյուրի տեղեկություններով՝ հոսպիտալ են ժամանել ՀՀ ռազմական ոստիկանության եւ ՀՀ ՊՆ գլխավոր շտաբի բարձրաստիճան սպաներ, որոնք պարզում են դեպքի հանգամանքները:

Shamshyan.com-ի տեղեկություններով՝ մահացածը հոսպիտալ է տեղափոխվել Նուբարաշենի կրակարաններից (պոլիգոնից)՝ հրազենային վնասվածքով: Նա 19-ամյա Նարեկ Հակոբյանն է: Դեպքի փաստով ՀՀ քննչական կոմիտեի զինվորական քննչական վարչության կայազորի քննչական բաժնում նախաձեռնվել է քրեական վարույթ: Տեղի ունեցածը սպանությո՞ւն է, դժբախտ պատահա՞ր, թե՞ ինքնասպանություն՝ պարզվում է:

Ք. Մ.

ԴԱՏԱՐԱՆ ՉԵՆ ԿԱՐՈՂԱՆՈՒՄ ՄՏՑՆԵԼ

Երեկ Փարաքարի համայնքապետ Վալոդյա Գրիգորյանի սպանության գործով դատական նիստին կալանավորներ Գեւորգ Հարությունյանին եւ Նարեկ Օհանյանին չէին կարողանում տեղափոխել դատարան. դատարանի լույսերը անջատված էին, իսկ դարպասի դռները առանց լույսի չեն բացվում:

Հիշեցնենք, որ 2026 թվականի սեպտեմբերի 23-ին Մերձավանում՝ իր նորակառույց տան մոտ, սպանվել էր Փարաքարի համայնքապետ Վալոդյա Գրիգորյանը: Նրա հետ միասին սպանվել էր քրեական ոստիկանության ծառայող Կարեն Աբրահամյանը: Նշենք, որ մեղադրյալի աթոռին են Նարեկ Օհանյանը եւ Գեւորգ Հարությունյանը:

ԲԱՑԱՀԱՅՏԵԼ ԵՆ

Քրեական ոստիկանության թմրամիջոցների անօրինական շրջանառության դեմ պայքարի վարչությունում ստացվել էր օպերատիվ տեղեկություն, որ Սյունիքի մարզի բնակիչը Երեւանի իր բնակության վայրում տարբեր քիմիական նյութերի միջոցով պատրաստում էր մեթամֆետամին տեսակի թմրամիջոց: Մարտի 25-ի երեկոյան, մայրաքաղաքի Վիլնյուսի փողոցում, 32-ամյա տղամարդը թմրամիջոց ապօրինի ձեռք բերելու, պահելու եւ իրացնելու կասկածանքով ձերբակալվել է եւ Նորագյուղ թաղամասի 46-ամյա բնակչի հետ միասին տեղափոխվել է Նոր Նորքի բաժին: Խուզարկությամբ նրանց մոտ հայտնաբերվել է ապակե կոլբա՝ մոխրացած հետքերով, մարիխուանայով լցված գլանակ, «Ֆենազեպամ» գրառմամբ հոգեմետ դեղահաբ եւ ծալովի դանակ:

32-ամյա տղամարդը ներկայացվել է Ավան եւ Նոր Նորք վարչական շրջանների քննչական բաժին, որտեղ նախաձեռնվել է քրեական վարույթ: Դատարանի որոշմամբ, նրա բնակության վայրում կատարված խուզարկությամբ հայտնաբերվել են մարիխուանայի երկու եւ մեթամֆետամինի մեկ փաթեթ, ինչպես նաեւ թմրամիջոց պատրաստելու համար նախատեսված հեղուկային զանգվածներով լցված երկու տարա՝ 168 եւ 238 գրամ քաշերով: Ըստ նրա հայտարարության՝ այդ հեղուկից սինթեզման միջոցով ստացել է մեթամֆետամինի բյուրեղային զանգված:

Նախաքննությունը շարունակվում է:

● *Ապրիլի 13-ից 14-ը հանրապետությունում բացահայտվել է բնակարանային գողության 1 դեպք:*

ՀԱՍԱՐԱԿՈՒԹՅՈՒՆ

ՄԱՐԴ

ՔՊ-Ի ՀԱՄԱՐ Ո՞ՆՑ Է ՔՎԵՆԵՐ ԱՊԱՀՈՎԵԼՈՒ

Ապրիլի 10-ին նշանակված էր Դիլիջան համայնքի ավագանու հերթական նիստը: Սակայն այդ նիստը չկայացավ, քանի որ համայնքի ավագանու 21 անդամից նիստին ներկայացել էր 8 անդամ, քվորում չկար: Հետաքրքիր է, որ համայնքի ավագանիում մեծամասնություն կազմող «Քաղաքացիական պայմանագիր» խմբակցությունն ավագանու կազմում ունի 13 անդամ, որից նիստին ներկայացել էին 8-ը: Ավագանու ապրիլի 10-ի նիստում ընդգրկված 10 հարց կար՝ համայնքի մի քանի հողամասեր ընդլայնման կարգով օտարելուն համաձայնություն տալու, որոշ հողամասեր անվանակոչելու, Դիլիջան քաղաքի Ուսանողական փողոցի թիվ 70 հասցեում գտնվող Դիլիջանի բազմագործառույթային քոլեջի շենքի հիմնանորոգման նախատեսվող գործունեության վերաբերյալ նախնական համաձայնություն տալու, Դիլիջան համայնքի 2026թ. տեղական բյուջեում փոփոխություն կատարելու մասին. «Գրին Ռոք» բարեգործական հիմնադրամի եւ Դիլիջան համայնքի միջեւ կնքված նվիրատվության պայմանագրի եւ Դիլիջան համայնքի 2026թ. տեղական բյուջեի վարչական մասում փոփոխություն կատարելու, գույքահարկի արտոնություն սահմանելու մասին: Դիլիջանի համայնքապետարանում իմ աղբյուրը տեղեկացրեց, որ Դիլիջան համայնքում հողամասերի կադաստրային ծածկագրերի հետ խառնակ վիճակ է, այդ ծածկագրերը ճշգրտելու մեծ անհրաժեշտություն կա: Նախկինում բենզալցակայանում բենզինի լիցքավորող աշխատած, նաեւ իր ավտոմեքենայով գնորդներին ցեմենտ, ավազ մատակարարած, շինանյութ ծախած Դավիթ Սարգսյանը վարչապետ Նիկոլ Փաշինյանի որոշմամբ Դիլիջան համայնքի ղեկավարի պաշտոնակատար է նշանակվել 2021թ. փետրվարի 26-ին: 2021թ. հոկտեմբերի 17-ին կայացած Դիլիջան համայնքի ավագանու ընտրությունների արդյունքում ձեւավորված ավագանու կողմից նա ընտրվել է համայնքի ղեկավար: Դ. Սարգսյանը նաեւ «Քաղաքացիական պայմանագիր» կուսակցության Դիլիջանի տարածքային կառույցի ղեկավարն է: Նա չի կարողանում ավագանու «Քաղաքացիական պայմանագիր» խմբակցությունն արդյունավետ ղեկավարել, ապահովել այդ խմբակցության անդամների մասնակցությունը ավագանու նիստին,ավագանու քվորում ապահովել, նա ինչպե՞ս է ղեկավարում իշխող կուսակցության տարածքային կառույցը: Դավիթ Սարգսյանը ինչպե՞ս է այս տարվա հունիսի 7-ին կայանալիք ԱԺ ընտրություններում Դիլիջան համայնքում «Քաղաքացիական պայմանագիր» կուսակցության համար շատ քվեներ ապահովելու:

ՈՍԿԱՆ ՍԱՐԳՍՅԱՆ

ՊԱՀԱՆՋ

ԻՐԱՆԸ ՄԵՐԺՈՒՄ Է ԲԱՀՐԵՅՆԻ ՄԵՂԱԴՐԱՆՔՆԵՐԸ

Իրանը կտրուկ արձագանքել է Բահրեյնի եւ Պարսից ծոցի մի շարք երկրների մեղադրանքներին՝ դրանք անվանելով անհիմն եւ մոլորեցնող: ՄԱԿ-ում Իրանի մշտական ներկայացուցիչ Սաիդ Իրավանին ապրիլի 14-ին ուղղված նամակում դիմել է ՄԱԿ-ի գլխավոր քարտուղար Անտոնիո Գուտերեշին եւ Անվտանգության խորհրդի նախագահ Ջամալ Ֆարես Ալրովաիեին՝ ներկայացնելով Թեհրանի դիրքորոշումը:

Իրանը պնդում է, որ իրականում հենց Միացյալ Նահանգներն ու Իսրայելը 2026 թվականի փետրվարի 28-ին իրականացրել են անօրինական ռազմական հարձակում Իրանի դեմ՝ խախտելով միջազգային իրավունքի հիմնարար սկզբունքները: Թեհրանը նաեւ մեղադրում է Պարսից ծոցի որոշ երկրներին, այդ թվում՝ Բահրեյնին, որ նրանք իրենց տարածքն ու օդային տարածքը տրամադրել են այդ գործողությունների համար եւ դրանով դարձել են համակատարներ:

Նամակում նշվում է, որ այդ երկրներից են իրականացվել հարվածներ նաեւ քաղաքացիական օբյեկտների վրա, այդ թվում՝ դպրոցների, հիվանդանոցների եւ այլ ենթակառուցվածքների: Իրանը մասնավորապես հիշատակում է Մինաբ քաղաքում տեղի ունեցած հարձակումը, որի հետեւանքով զոհվել են տասնյակ երեխաներ:

Իրանի կողմը հայտարարում է, որ ունի ապացույցներ, ըստ որոնց՝ օգտագործված զինատեսակները կապված են տարածաշրջանի որոշ երկրների զինանոցների հետ: Այդ հանգամանքը, ըստ Թեհրանի, վկայում է, որ նրանք ոչ միայն աջակցել են, այլեւ անմիջականորեն մասնակցել են ագրեսիային:

Միաժամանակ Իրանը մերժում է ահաբեկչության հետ կապերի մասին մեղադրանքները՝ ընդգծելով, որ ինքն էլ ահաբեկչության զոհ է եղել եւ պայքարել է նման խմբավորումների դեմ, այդ թվում՝ «Ալ-Քաիդայի» եւ «Իսլամական պետության» դեմ:

Թեհրանը նաեւ հայտարարում է, որ տարածաշրջանում անկայունության հիմնական պատճառը Իսրայելի գործողություններն են՝ ԱՄՆ-ի աջակցությամբ: Նամակում նշվում է, որ տարբեր «դիմադրության շարժումներ» ձեւավորվել են որպես պատասխան՝ օկուպացիային եւ ագրեսիային: Ի վերջո, Իրանը կոչ է անում Պարսից ծոցի երկրներին դադարեցնել նման գործողությունները եւ կատարել իրենց միջազգային պարտավորությունները՝ զգուշացնելով, որ իրավունք է վերապահում պատասխանատվության ենթարկել բոլոր այն կողմերին, որոնք ներգրավված են իր դեմ իրականացված գործողություններում:

ԱՆԻ ՎԱՐԴԱՆՅԱՆ

ԸՆԴՈՒՆԵԼ Է ՊԱՏՎԻՐԱԿՈՒԹՅԱՆԸ

Ապրիլի 14-ին Մարդու իրավունքների պաշտպան Անահիտ Մանասյանն ընդունել է Եվրոպայի խորհրդի ծրագրերի համակարգման տնօրեն Կլաուս Նոյկիրխի գլխավորած պատվիրակությանը:

Ողջունելով հյուրերին՝ Անահիտ Մանասյանը կարեւորել է Եվրոպայի խորհրդի հետ հաստատված սերտ, կայուն եւ արդյունավետ համագործակցությունը՝ ընդգծելով ԵԽ ծրագրերի կարեւոր դերակատարությունը Հայաստանում մարդու իրավունքների պաշտպանության համակարգի զարգացման գործում:

Հանդիպման ընթացքում քննարկվել են մի շարք կարեւոր հարցեր, այդ թվում՝ կանանց, երեխաների, հաշմանդամություն ունեցող անձանց, ազգային փոքրամասնությունների, զինված ուժերում իրավունքների պաշտպանության, սոցիալական իրավունքներին, առողջության պահպանման իրավունքին եւ մի շարք այլ ոլորտներին առնչվող: Այս համատեքստում Անահիտ Մանասյանն ընդգծել է ՄԻՊ-ին առընթեր գործող խորհուրդների կարեւորությունը, որոնցում ներգրավված են քաղաքացիական հասարակության ներկայացուցիչներ:

Անդրադարձ է կատարվել նաեւ ատելության խոսքի եւ անհանդուրժողականության դեմ պայքարի կարեւորությանը՝ հատկապես խորհրդարանական ընտրությունների նախաշեմին: Պաշտպանը մտահոգություն է հայտնել տարբեր հիմքերով խտրական եւ ատելության խոսքի տարածման առնչությամբ՝ նշելով, որ նման երեւույթները հատկապես ակտիվանում են նախընտրական ժամանակահատվածում եւ պետք է պատշաճ հասցեավորվեն:

Անդրադարձ է կատարվել նաեւ «Խտրականության կանխարգելման եւ խտրականությունից պաշտպանության մասին» օրենքի նախագծին եւ ոլորտում առկա մարտահրավերներին: Պաշտպանը կարեւորել է օրենքի շուտափույթ ընդունման ու ՄԻՊ հաստատության ինստիտուցիոնալ հզորացման անհրաժեշտությունը՝ ընդգծելով այդ նպատակով պետության կողմից բավարար մարդկային, տեխնիկական եւ ֆինանսական ռեսուրսների տրամադրման կարեւորությունը՝ մանդատը լիարժեքորեն իրականացնելու նպատակով:

Հանդիպման ավարտին կողմերը բարձր են գնահատել մարդու իրավունքների պաշտպանության ոլորտում Պաշտպանի աշխատակազմի եւ Եվրոպայի Խորհրդի միջեւ ձեւավորված երկարամյա եւ արդյունավետ համագործակցությունը եւ նախանշել են փոխգործակցությունն ընդլայնելու ուղղությունները:

● *Ապրիլի 13-ից 14-ը բացահայտվել է տրանսպորտային միջոց վարելու իրավունքից զրկված լինելու 56 դեպք:*

ԼՈՒՐԵՐ

ԻՐԱՆԸ ԿՈՂՄ Է

Իրանը բացառապես կողմնակից է երկխոսությանը եւ կառուցողական հարաբերությունների կառուցմանը այլ երկրների հետ, բայց չի հանդուրժի նրանց փորձերը՝ իրենց կամքը պարտադրելու, հայտարարել է Իսլամական Հանրապետության նախագահ Մասուդ Փեզեշքիանը: «Իրանը չի ձգտում պատերազմի կամ անկայունության եւ միշտ կողմնակից է բացառապես երկխոսությանը եւ տարբեր երկրների հետ կառուցողական համագործակցությանը: Սակայն Իսլամական Հանրապետությանը իր կամքը պարտադրելու կամ նրան կապիտուլյացիայի ենթարկելու ցանկացած փորձ դատապարտված է ձախողման: Իրանի ժողովուրդը երբեք չի ընդունի նման մոտեցումը», - Փեզեշքիանի խոսքերն է մեջբերվել իր Telegram ալիքում:

ԹՐԱՄՓԸ ԿԱՐԾՈՒՄ Է

ԱՄՆ նախագահ Դոնալդ Թրամփը կարծում է, որ Իրանի հետ հրադադարի ռեժիմը երկարաձգելու անհրաժեշտություն չի լինի, հայտնել է ABC հեռուստաալիքի լրագրող Ջոնաթան Կարլը: Ամերիկացի առաջնորդի հետ զրույցի ժամանակ, նշել է Կառլը, վերջինս իրեն ասել է, որ չի քննարկում Իսլամական Հանրապետության հետ հրադադարի երկարաձգման հարցը եւ «չի կարծում, որ դա անհրաժեշտ կլինի»: «-Կարծում եմ՝ դուք կտեսնեք երկու զարմանալի օր: Ես իսկապես հավատում եմ դրան», - լրագրողը մեջբերել է ամերիկացի առաջնորդի խոսքերը իր X էջում: Ավելի վաղ Associated Press-ը հայտնել էր, որ ԱՄՆ-Իրան բանակցությունների նոր փուլը կարող է տեղի ունենալ ապրիլի 16-ին: Հարցին, թե արդյոք հակամարտությունը կավարտվի համաձայնագրով, Թրամփը պատասխանել է, որ այն «կավարտվի այսպես թե այնպես»: «Կարծում եմ՝ համաձայնագիրը նախընտրելի է, քանի որ այդ դեպքում նրանք կարող են վերականգնել երկիրը», - հավելել է պետության ղեկավարը:

ՀԱՐՎԱԾԵԼ ԵՆ

ԱՄՆ զինված ուժերը հարվածել են Խաղաղ օվկիանոսում թմրանյութերի ապօրինի շրջանառության մեջ գտնվող նավին՝ սպանելով չորս մարդու, ասվում է ԱՄՆ Հարավային հրամանատարության հայտարարության մեջ: «ԱՄՆ Հարավային հրամանատարության հրամանատար Ֆրենսիս Դոնովանի հրամանով, ապրիլի 14-ին «Հարավային նիզակ» համատեղ աշխատանքային խումբը մահացու հարված է հասցրել նավին», - ասվում է X կայքում տեղադրված հայտարարության մեջ:

Հայտարարություն

Ես՝ Վարդանուշ Վալոդյայի Մարգարյանս, տեղեկացնում եմ, որ կորցրել եմ Երեւանի պետական համալսարանի ռոմանագերմանական բանասիրության ֆակուլտետի «Ֆրանսերեն լեզու եւ գրականություն» բաժնի դիպլոմս:

Նշված դիպլոմը ստացել եմ 1991-1996 թվականներին՝ «ուսուցիչ, բանասեր եւ թարգմանիչ» որակավորմամբ:

Դիպլոմի սերիան՝ Ա019539,

գրանցման համարը՝ 60128:

ԵՎՐՈՊԱՅԻ ԱՌԱՋՆՈՒԹՅՈՒՆ

«ՓՈՐՁԵԼՈՒ ԵՆՔ ՀԱՆԴԵՍ ԳԱԼ ԹԻՄԱՅԻՆ ՊԱՅՔԱՐՈՒՄ»

Հայաստանի մարմնամարզության հավաքականի գլխավոր մարզիչ Հակոբ Սերոբյանը գոհ է այս տարվա Աշխարհի գավաթի փուլերում իր սաների ցույց տված արդյունքներից:

«Մենք նվաճել ենք 4 ոսկե, 3 արծաթե ու 1 բրոնզե մեդալներ: Բոլոր փուլերում էլ չորս մասնակիցները դուրս են եկել եզրափակիչ, ինչը ոչ բոլոր երկրներին է հաջողվում: Արթուր Ավետիսյանն առաջին անգամ դարձավ Աշխարհի բացարձակ գավաթակիր, Արթուր Դավթյանը վնասվածքից հետո կարողացավ հաջող մասնակցել ու հաղթել, ոսկի նվաճեց նաեւ Համլետ Մանուկյանը: Ցավում եմ Մամիկոն Խաչատրյանի համար, որը կարող էր գավաթակիր դառնալ, բայց չկարողացավ:

Այս տարվա Աշխարհի գավաթը շատ խառը ստացվեց, որովհետեւ 6 փուլի փոխարեն պատերազմի պատճառով չեղարկվեց Դոհայի մրցաշարն ու կազմակերպվեց 5 փուլ: Դրա հետեւանքով էլ հաշվարկներում փոփոխություններ եղան: Բայց մեր չորս մասնակիցներն էլ կարողացել են ապահովել իրենց մասնակցությունն Աշխարհի առաջնությունում:

Հիմա տղաները մի քիչ կհանգստանան ու կսկսեն պատրաստվել Եվրոպայի առաջնությանը, որը կայանալու է օգոստոսի 19-23-ը Զագրեբում: Փորձելու ենք ԵԱ-ում հանդես գալ թիմով ու եթե գրավենք մինչեւ 13-րդ տեղը, ապա իրավունք կունենանք Աշխարհի առաջնությանը եւս ներկայանալ թիմային պայքարում»:

ԼՈՒՐԵՐ

«ՄԻԱՄՆՈՒԹՅԱՆ ԹԵՎԵՐ»-Ն ԱՐԴԵՆ ԳՐԱՆՑՎԱԾ Է

«Միասնության թեւեր» կուսակցությունն արդեն գրանցված է եւ մասնակցելու է 2026 թվականի խորհրդարանական ընտրություններին: Մեր կուսակցության ընտրական ցուցակում կընդգրկվեն մեր արժեքները կիսող թեկնածուներ: Այս մասին հայտնել են կուսակցությունից:

«Մեր արժեքներն ու մոտեցումները հստակ են՝ արդարություն, խաղաղություն, իրավունքի գերակայություն, թափանցիկ պետություն եւ խելամիտ որոշումներ՝ պոպուլիզմի փոխարեն:

Մենք համոզված ենք, որ բարդ խնդիրները պահանջում են մասնագիտական եւ մտածված պատասխաններ, ոչ թե լոզունգներ:

Այսօր, դեռեւս մինչեւ ընտրարշավի պաշտոնական մեկնարկը, ըստ տարբեր սոցիոլոգիական տվյալների, կուսակցությունը վստահաբար վաղուց հաղթահարել է անցողիկ շեմը, իսկ մարդկանց վստահությունը շարունակում է աճել: Այն ուժի համար, որի գլխավոր ռեսուրսը ոչ թե մեծ բյուջեն է կամ վարչական լծակները, այլ ճշմարտությունն ու արժանապատվությունը, սա ազնիվ եւ լավ մեկնարկ է:

Արդարությունը գալիս է, միացե՛ք մեզ. միասին կգտնենք խելամիտ լուծումներ մեր երկրի բոլոր խնդիրների համար»: *(Գ)*

ՊԱՊՅԱՆԸ՝ ԽԶՄԱԼՅԱՆԻՆ

«Մոդուս Վիվենդի» հետազոտական կենտրոնի հիմնադիր-ղեկավար, ԱԺԲ անդամ Արա Պապյանի ՖԲ գրառումը. «Այսօր՝ 2026 թ. ապրիլի 14-ին, Տիգրան Խզմալյանն իր ելույթում ասել է. «Մենք 21 թվականի ընտրություններին ստեղծեցինք Ազգային ժողովրդավարական բեւեռ, որի մեջ մտնում էր Սասնա ծռեր կուսակցությունը եւ Եվրոպական կուսակցությունը: Միասին մենք դարձանք Ազգային ժողովրդավարական բեւեռ»: Մեղմ ասած՝ նման հայտարարությունը որեւէ կապ չունի իրականության հետ: Ազգային ժողովրդավարական բեւեռը չի ստեղծվել երկու կուսակցությունների միավորումից: Այն ստեղծվել է որպես ՎԵՐԿՈՒՍԱԿՑԱԿԱՆ հարթակ՝ միավորելու ազգային ժողովրդավարական ուժերին ու անհատներին: Ի վերջո, պատահական չէր, որ նրա խորհրդի անդամների մեծամասնությունը եղել եւ մնում են անկուսակցական: Անգամ կուսակցության անդամները Բեւեռում էին ՈՉ ԿՈՒՍԱԿՑԱԿԱՆ՝ անհատական կարգավիճակով:

Իսկ նա հեռացավ Բեւեռից, որովհետեւ իր կուսակցության համար ԲԱՋԱՐ էր սարքել եւ առաջարկում էր ցուցակը կազմել՝ մեկ հոգի Սասնա ծռերից, մեկ հոգի Եվրոպական կուսակցությունից, մեկ հոգի մնացածից: Բնականաբար, նման կուսակցականացված դիրքորոշումն անընդունելի էր: Նրա հեռանալը Բեւեռից ոչ մի կապ չի ունեցել գաղափարական կամ առավել եւս աշխարհաքաղաքական կողմնորոշումների հետ: Նույն ելույթում Խզմալյանը նաեւ ասել է. «Շաբաթներ առաջ Ազգային ժողովրդավարական բեւեռ անվանող իրեն կառույցը առաջարկում էր միանալ Կարապետյան կոչվող քաղաքական շարժմանը»: Սա էլ սուտ: Ազգային ժողովրդավարական բեւեռը ոչ պաշտոնական, ոչ էլ անհատական մակարդակով երբեւէ չի «առաջարկել միանալ» որեւէ մեկին, այդ թվում նաեւ Սամվել Կարապետյանի շարժմանը: Պահանջում եմ, որ Տիգրան Խզմալյանն այս գրության տակ տեղադրի իր խոսքը հիմնավորող որեւէ տեսագրություն: Հակառակ դեպքում նա զրպարտիչ է եւ ստախոս»:

ՊԱՏՐԱՍՏ Է

Ռուսաստանը շարունակում է արտահայտել իր պատրաստակամությունը Միացյալ Նահանգների հետ Ուկրաինայի հարցով բանակցությունների համար: Այս մասին հայտարարել է Ռուսաստանի արտաքին գործերի նախարար Սերգեյ Լավրովը Չինաստան կատարած այցից հետո կայացած մամուլի ասուլիսում, հաղորդում է ՌԻԱ Նովոստին: «Մենք պետք է իմանանք, թե ինչպես են ընթանում ԱՄՆ նախագահ Դոնալդ Թրամփի եւ Ռուսաստանի նախագահ Վլադիմիր Պուտինի կողմից նախաձեռնված բանակցությունները, որոնք մենք ողջունել ենք եւ շարունակում ենք արտահայտել մեր պատրաստակամությունը՝ շարունակելու դրանք», - ասել է նախարարը: Ապրիլի 12-ին Ռուսաստանի նախագահի մամուլի քարտուղար Դմիտրի Պեսկովը հայտարարել է, որ ուկրաինական ճգնաժամի խաղաղ կարգավորման գործընթացում ԱՄՆ միջնորդությունը ներկայումս դադարեցված է ամերիկացիների աշխատանքային ծանրաբեռնվածության պատճառով:

399 ԶԻՆԾԱՌԱՅՈՂ

ԱՄՆ Կենտրոնական հրամանատարության (CENTCOM) խոսնակ կապիտան Թիմ Հոքինսի խոսքով՝ Իրանի կողմից իրականացված հարձակումների հետեւանքով վիրավորվել է առնվազն 399 ամերիկացի զինծառայող, ըստ Associated Press-ի: Հոքինսի խոսքով՝ 354 զինծառայող արդեն վերադարձել է ծառայության: Associated Press-ի տվյալներով՝ ամերիկացի զինծառայողների շրջանում պաշտոնական զոհերի թիվը 13 է: Փետրվարի 28-ին ԱՄՆ-ն եւ Իսրայելը պատերազմ սկսեցին Իրանի դեմ: Իրանի իշխանությունները որոշեցին փակել Հորմուզի նեղուցը ԱՄՆ-ի, Իսրայելի եւ Իրանի դեմ ագրեսիան աջակցող երկրների հետ կապված նավերի համար: Ապրիլի 7-ին Վաշինգտոնը հայտարարեց Թեհրանի հետ երկշաբաթյա զինադադարի մասին: Իրանի շտապ բժշկական օգնության կազմակերպության տվյալներով՝ պատերազմի 40 օրվա ընթացքում ԱՄՆ-Իսրայել հարվածների հետեւանքով զոհվել է 3375 իրանցի:

●«Ժողովուրդ» օրաթերթում եւ ArmLur.am կայքում գովազդ,հայտարարություն,հաշվետվություն, ծանուցում տեղադրելու համար զանգահարել 094-455-456 հեռախոսահամարով:

ՃԳՆԱԺԱՄ

ԹԱԳՈՒՀԻ ԵՂԻՍԱԲԵԹ II-Ի ՍՏՎԵՐՈՒՄ

Մեծ Բրիտանիայի թագավորական ընտանիքը վերջին տարիներին բախվել է մի շարք լուրջ փորձությունների՝ հատկապես արքա Չարլզ III-ի եւ Քեյթ Միդլթոնի քաղցկեղի ախտորոշումների ֆոնին: Այս իրավիճակում շատերը փորձում են պատկերացնել, թե ինչպես կարձագանքեր նախկին միապետը՝ թագուհի Եղիսաբեթ II-ը, որը շուրջ 70 տարի հանդիսացել է կայունության եւ հանգստության խորհրդանիշ:

Թագուհին, որը հայտնի էր իր զսպվածությամբ եւ պատասխանատվության զգացումով, հավանաբար խորապես անհանգստացած կլիներ ընտանիքի անդամների առողջական խնդիրներով: Սակայն, ինչպես նշում են արքայական կենսագիրները, նա իր ուժը կգտներ հավատքի եւ պարտքի զգացումի մեջ՝ շարունակելով աջակցել թե՛ իր որդուն, թե՛ հարսին: Նրա համար ամենակարեւորը միշտ եղել է ընտանիքի միասնությունը եւ պետության կայունությունը:

Թագուհու նախկին մամուլի քարտուղարների կարծիքով՝ ճգնաժամային իրավիճակներում նա հանդես էր գալիս որպես միավորող ուժ: Նրան հաճախ նկարագրում էին որպես «կպչուն սոսինձ», որը պահում էր ընտանիքը միասին՝ նույնիսկ ամենաբարդ ժամանակներում: Նրա ներկայությունը վստահություն էր ներշնչում թե՛ հասարակությանը, թե՛ թագավորական ընտանիքի անդամներին:

Թագուհու մահից հետո՝ 2022 թվականին, միապետությունը կարծես ավելի խոցելի է դարձել: Բացի առողջական խնդիրներից, ընտանիքը բախվել է նաեւ ներքին լարվածությունների, մասնավորապես արքայազն Հարիի հեռացման եւ արքայազն Էնդրյուի շուրջ սկանդալների հետ: Այս ամենը որոշ փորձագետների կարծիքով թուլացրել է միապետության ընդհանուր պատկերը:

Այնուամենայնիվ, շատերը վստահ են, որ Բրիտանական միապետությունը ունի դիմակայելու կարողություն: Պատմությունը ցույց է տալիս, որ այն արդեն հաղթահարել է ավելի ծանր փորձություններ: Թագուհի Եղիսաբեթ II-ի ժառանգած արժեքները՝ կայունություն, զսպվածություն եւ ծառայություն, շարունակում են ուղենիշ հանդիսանալ ներկայիս սերնդի համար:

Այսպիսով, թեեւ նա այլեւս նրանց հետ չէ, նրա ազդեցությունը դեռ զգացվում է՝ հատկապես նման դժվար պահերին, երբ թագավորական ընտանիքը կրկին պետք է ապացուցի իր տոկունությունը:

ՄԱՐԶԱԿԱՆ

ՆՈՐԻՑ ՔԻՋԵԼ Է

Հայաստանի կանանց ֆուտբոլի հավաքականն առաջին հանդիպումն է անցկացրել նոր գլխավոր մարզիչ Մարիամ Ստեփանյանի գլխավորությամբ:

Այն 2027 թվականի Աշխարհի առաջնության որակավորման փուլում հանրապետական ստադիոնում ընդունել է Բելառուսի հավաքականին ու զիջել 0:3 հաշվով: Գոլերը խփել են Զարինա Կապուստինան, Անաստասիա Շլապակովան եւ Վիկտորիա Վալյուկը:

Մարտին Ղազախստանի դեմ կայացած խմբային փուլի առաջին դիմակայությունում մեր թիմը 3 անպատասխան գնդակ էր ընդունել Ղազախստանից:

C լիգայի C6 խմբի առաջատարները 3-ական միավորով Ղազախստանն ու Բելառուսն են:

Հայաստանի կանանց ընտրանու հաջորդ հանդիպումը լինելու է հունիսի 5-ին, մրցակիցը նորից կլինի Ղազախստանը:

ՍԻՆԴԱՐՈՎԸ՝ ՀԱՂԹՈՂ

20-ամյա ուզբեկ գրոսմայստեր Ջավոխիր Սինդարովը նվաճեց Կիպրոսում անցկացվող Շախմատի աշխարհի չեմպիոնի հավակնորդների մրցաշարի հաղթողի կոչումը: Նախավերջին տուրում Սինդարովը սեւ ֆիգուրներով ոչ ոքի խաղաց հոլանդացի Անիշ Գիրիի հետ եւ 13 հնարավորից վաստակել է 9,5 միավոր:

Սինդարովը տիտղոսը կվիճարկի աշխարհի չեմպիոն, 19-ամյա հնդիկ գրոսմայստեր Գուկեշ Դոմարաջուի հետ մրցախաղում:

«ԱՏԼԵՏԻԿՈ»-Ն ՈՒ ՊՍԺ-Ն

«Ատլետիկո»-ն ու ՊՍԺ-ն հաղթել են Չեմպիոնների Լիգայի քառորդ եզրափակիչներում ու կշարունակեն պայքարը: «Ատլետիկո»-ն հյուրընկալել է «Բարսելոնա»-ին ու զիջել 1:2 հաշվով: Կատալոնական թիմի կազմում 4-դ որպեին հաշիվը բացել է Լամին Յամալը, ապա աչքի է ընկել Ֆեռան Տորեսը: Մադրիդցիներից պատասխանել է Ադեմոլա Լուկմանը:

Երկու հանդիպումների արդյունքում 3:2 հաշվով հաղթել է Դիեգո Սիմեոնեի թիմն ու պայքարը կշարունակի կիսաեզրափակչում:

Այս փուլ հասած եկած մյուս թիմը ՉԼ-ի գործող հաղթող ՊՍԺ-ն է, որը նաեւ պատասխան խաղում է 2:0 հաշվով առավելության հասել «Լիվերպուլ»-ի նկատմամբ: «Էնֆիլդ»-ում կայացած խաղում դուբլ է ձեւակերպել Ուսման Դեմբելեն:

Երեկ կայանալու էին «Արսենալ»-«Սպորտինգ» (1:0) եւ «Բավարիա»-«Ռեալ» (2:1) դիմակայությունները:

ԼՈՒՐԵՐ

ԱՄԵՆ ԻՆՉ ԿԱՆԻ

«Եվրոպայի գործող չեմպիոնի կարգավիճակում եմ մեկնում Ալբանիա: Այս առումով պատասխանատվությունն ավելի է ծանրանում, պայքարն ավելի բարդ է դառնում: Կփորձեմ ամեն ինչ անել, որ կարողանամ 5-րդ ոսկե մեդալը նվաճել»,-այս մասին լրագրողների հետ զրույցում ասաց Փարիզի Օլիմպիական խաղերի բրոնզե մեդալակիր, աշխարհի կրկնակի, Եվրոպայի քառակի չեմպիոն Մալխաս Ամոյանը:

77 կգ քաշային կարգում Հայաստանի առաջատարը պատրաստվում է ԵԱ 5-րդ տիտղոսի համար պայքարին: Նրա խոսքով՝ հաղթանակը հեշտ չի տրվելու:

«Լավ հավաքներ ենք ունեցել նախապատրաստական փուլում եւ այժմ արդեն 5-րդ հավաքն ենք անցնում: Լավ մարզավիճակում եմ գտնվում, լավ եմ պատրաստվել, բոլոր հավաքներին մասնակցել եմ: Եվրոպայի առաջնության մրցագորգը ցույց կտա, թե ինչպես եմ պատրաստվել եւ ինչի եմ արժանի:

Եվրոպայի գործող չեմպիոնի կարգավիճակում եմ մեկնում Ալբանիա: Այս առումով պատասխանատվությունն ավելի է ծանրանում, պայքարն ավելի բարդ է դառնում: Երբ գործող չեմպիոնի կարգավիճակում ես մասնակցում, բոլորը քո դեմ ավելի շատ տրամադրված են գալիս, էլ ավելի պատրաստված են լինում: Այս առումով հաղթելն ավելի է դժվարանում: Կփորձեմ ամեն ինչ անել, որ կարողանամ 5-րդ ոսկե մեդալը նվաճել:

Մրցաշարը ցույց կտա, թե որքանով եմ ավելացրել մարզավիճակս: Հաղթանակը, հաստատ, հեշտ չի տրվելու: Իմ քաշային կարգում 6-7 ուժեղ մրցակիցներ կան, որոնք, հիմնականում, հավակնում են հաղթողի կոչմանը: Այդ օրն ով լավ զգա իրեն, ով ավելի լավ մարզավիճակում կլինի, նա էլ կհաղթի»,- ասաց Մալխաս Ամոյանը:

Հիշեցնենք, որ 2025թ. Սլովակիայի մայրաքաղաք Բրատիսլավայում անցկացված Եվրոպայի առաջնությունում Ամոյանը հռչակվեց քառակի չեմպիոն: Մալխաս Ամոյանը Եվրոպայի առաջնություններում տիտղոսը նվաճել է նաեւ 2022թ., 2023թ. եւ 2024թ.-ին:

ԱՌԱՔԱՏԱՐՆԵՐԻ ՇԱՐՔՈՒՄ ԵՆ

Լեհաստանի Կատովիցե քաղաքում շարունակվում է 2026 թվականի շախմատի Եվրոպայի անհատական առաջնությունը: Հայ գրոսմայստերներ Շանթ Սարգսյանը եւ Հայկ Մարտիրոսյանը 7 հնարավորից ունեն 5.5 միավոր եւ կիսում են 5-րդ հորիզոնականը:

Մրցաշարի առաջատարներն են Այդին Սուլեյմանլին, Նիկոլոզի Կաչարավան, Յան Մալեկը եւ Դավիդ Անտոն Գիխարոն, ովքեր ունեն 6 միավոր:

Հայ շախմատիստներից 5 միավորով առաջատարների շարքում են նաեւ գրոսմայստերներ Ռոբերտ Հովհաննիսյանը եւ Էմին Օհանյանը: Գրոսմայստերներ Մամիկոն Ղարիբյանը, Մանուէլ Պետրոսյանը, միջազգային վարպետներ Արսեն Դավթյանը, Վահե Սուքիասյանը, Արթուր Դավթյանը, Ռոբերտ Փիլիպոսյանը, ինչպես նաեւ ՖԻԴԵ-ի վարպետ Տիգրան Համբարձումյանը ունեն 4.5 միավոր:

Գաբրիել Սարգսյանը ունի 4 միավոր:

8-րդ խաղափուլը կմեկնարկի ապրիլի 15-ին՝ Հայաստանի ժամանակով 17:00-ին:

ՄԵԿՆԱՐԿԵԼ Է «ԱՐՄՄՈՆՈ» ՓԱՌԱՏՈՆԸ

ՀՀ կրթության, գիտության, մշակույթի եւ սպորտի նախարարության աջակցությամբ Երեւանում, Գյումրիում եւ Աբովյանում մեկնարկել է «Արմմոնո» 24-րդ միջազգային թատերական փառատոնը, որը կտեւի մինչեւ մայիսի 1-ը:

Այս տարի փառատոնի մասնակից երկրներն են Իսպանիան, Իտալիան, Սերբիան, Ռումինիան, Իրանը, Ռուսաստանը եւ Վրաստանը: Կցուցադրվի 22 մոնոներկայացում, 8-ը՝ միջազգային ծրագրում:

Փառատոնի ծրագրում ներառված են բազմատեսակ մոնոներկայացումներ՝ մոնոդրամա, մոնոդոկ, մոնոպար, որոնք կցուցադրվեն «Արմմոնո-Տրիումֆ», «Արմմոնո-Դեբյուտ», «Արմմոնո-Դանս», «Արմմոնո-Fairy Tail» խորագրերով:

Այս օրերին Երեւանում են միջազգային հեղինակավոր փառատոնների տնօրեններ, փորձագետներ, որոնք կանցկացնեն վարպետության դասեր:

Փառատոնի ծրագրում ներկայացված են նաեւ բեմադրություններ, որոնք վերաիմաստավորում են մեծ արվեստագետների ճակատագրերն ու ստեղծագործական ճանապարհը՝ նոր ընթերցմամբ:

● *Ապրիլի 19-ին Հրաչյա Ղափլանյանի անվան դրամատիկական թատրոնում տեղի կունենա «Չաո» ներկայացումը: Տոմսերի արժեքը՝ 3000 - 5000 դրամ:*

ԵՂԵ՛Ք ? ՏԵՂԵԿԱՅՎԱԾ

ԿԱՐԳ

ՀԱՐՑ. Ի՞նչ ոլորտներով կարող եմ ստանալ ուսանողական վարկեր:

Մարի Սիմոնյան, 19 տարեկան

ՊԱՏԱՍԽԱՆ. Այս ծրագիրը կրթության ֆինանսավորման այլընտրանքային գործիք է, որ հնարավորություն կտա Ձեզ ձեռք բերել վարկեր ուսումնառության ընթացքում եւ դրանց հիմնական մասը մարել ուսումնառության ավարտից հետո: Ծրագրի շրջանակում ուսանողներին վարկեր են տրամադրվում 12 տոկոս տարեկան տոկոսադրույքով, որից 2 տոկոսը սուբսիդավորում է պետությունը, իսկ մեկ տարվա ընթացքում առավել բարձր առաջադիմություն ցուցաբերած ուսանողների դեպքում սուբսիդավորումը կկազմի 3 տոկոս: Վարկերը տրամադրվում են 10 տարի մարման ժամկետով սահմանելով արտոնյալ ժամկետ՝ ուսումնառության ընթացքում առավելագույնը 4 տարվա համար, ինչը նշանակում է, որ այս ընթացքում մայր գումարի մարում տեղի չի ունենում, վճարվում են միայն տոկոսադրույքները: Յուրաքանչյուր ուսանողի հաշվով նախատեսված է առավելագույնը 1.800.000 դրամ առավելագույնը 4 մասնաբաժնով, սակայն ոչ ավելի, քան 450 հազար դրամը՝ կախված յուրաքանչյուր մասնագիտության համար սահմանված ուսման վարձավճարի չափից:

ՀՀ Ֆինանսների նախարարություն

«ԺՈՂՈՎՈՒՐԴ». Ծրագրի մասին առավել մանրամասն տեղեկատվություն ստանալու համար կարող եք դիմել «Բնակարան երիտասարդներին» վերաֆինանսավորում իրականացնող վարկային կազմակերպություն:

ՀԱՍԱՐԱԿՈՒԹՅՈՒՆ

ՀԱՐՑ. Ի՞նչ կարգով է իրականացվում մշակութային արժեքների ներմուծումը:

Սմբատ Գաբրիելյան, 58 տարեկան

ՊԱՏԱՍԽԱՆ. Մշակութային արժեքների ժամանակավոր ներմուծումն իրականացվում է ՀՀ կառավարության 2007 թ. հունիսի 1-ի N 827-Ն որոշման պահանջների համաձայն: Մշակութային արժեքներ ժամանակավոր ներմուծելիս հայտատուն մաքսային մարմին պետք է ներկայացնի հայտարարագիր, մշակութային արժեքներն ու դրանց լուսանկարները (3 օրինակ): Մաքսային մարմնում համապատասխան ընթացակարգով ձեւակերպվում է մշակութային արժեքների ժամանակավոր ներմուծումը՝ «Ժամանակավոր ներմուծում» մաքսային ռեժիմով:

ՀՀ կառավարության 2023 թվականի օգոստոսի 31-ի N 1462-Ն որոշման ու ՀՀ պետական եկամուտների կոմիտեի նախագահի 2025 թվականի հուլիսի 10-ի N 889-Լ եւ ՀՀ կրթության, գիտության, մշակույթի եւ սպորտի նախարարի հունիսի 30-ի N 24-Լ համատեղ հրամանի համաձայն՝ իրականացվում է ֆիզիկական անձանց կողմից առանց ներմուծման մաքսատուրքի եւ հարկերի վճարման (մաքսատուրքերի, հարկերի վճարումից ազատմամբ) անձնական օգտագործման մշակութային արժեքների ներմուծումը:

ՀՀ ԿԳՄՍ

ԼՈՒՐ ԿԱԴՐ

Լուսանկարը՝ shamshyan.com-ի

Վարորդը Ford Mustang-ով դուրս է եկել ճանապարհի երթեւեկելի գոտուց, բախվել երկաթե կրպակին. կան վիրավորներ:

ԲԱԺԱՆՈՐԴԱԳՐՈՒԹՅՈՒՆ

Մեր թերթը Բաժանորդագրվելու համար կարող եք դիմել

«Հայփոստ» ՊՓԲԸ
հեռ. 51-45-46, 51-45-47

«Բլից-Մեդիա» ՍՊԸ
հեռ. 52-53-01

Առաքումը՝ **ԱՆՎՃԱՐ**:

Ձեզ հետաքրքրող ցանկացած հարցով կարող եք դիմել «Ժողովուրդ» օրաթերթի խմբագրություն (**010 54-64-23** հեռախոսահամարով), եւ մենք անպայման կանդրադառնանք ձեր բարձրացրած բոլոր խնդիրներին:

ԱՌԱՋԱՐԿ
հայկական տպագիր մամուլից

«Ժողովուրդ» օրաթերթին բաժանորդագրվելու համար կարող եք լրացնել հետեւյալ բլանկը:
Ամեն օր թերթը կհասնի ձեր նախընտրելի վայր:

Բաժանորդագրության բլանկ

Անուն՝ _____
Ազգանուն՝ _____
Առաքման հասցե՝ _____
Բջջային եւ/կամ քաղաքային հեռախոս՝ _____

ԵՂԱՆԱԿԻ ՏԵՍՈՒԹՅՈՒՆ

	Շիրակ	- 5 - 10 + 6 + 11
	Կոտայքի լեռներ	- 5 - 9 + 7 + 10
	Կոտայքի նախալեռներ	- 1 + 2 +10 + 13
	Գեղարքունիք	- 2 - 7 + 7 + 10
	Լոռի	- 1 - 5 + 10 + 13
	Տավուշ	- 1 + 2 + 11 + 14
	Արագածոտնի լեռներ	- 6 - 10 + 4 + 8
	Արագածոտնի նախալեռներ	- 2 + 1 + 10 + 15

	Արարատ	- 1 + 1 +13 + 16
	Արմավիր	- 1 + 2 +14 + 17
	Վայոց ձորի լեռներ	- 6 - 9 + 5 + 8
	Վայոց ձորի նախալեռներ	0 + 3 +14 + 18
	Սյունիքի լեռներ	- 6 - 9 + 5 + 8
	Սյունիքի նախալեռներ	- 2 - 5 +10 + 14
	Սյունիքի հովիտներ	+ 1 + 5 +16 + 19
	Երեւան	- 1 + 1 +14 +16

Լրատվական գործունեություն իրականացնող՝
«Ժողովուրդ թերթի խմբագրություն» ՍՊԸ
Հասցեն՝ ք. Երեւան, Աբովյան 22ա/3, հեռ՝ **010 54-64-23**
Պետական գրանցման վկայականի համարը՝ 03Ա089086
տրված է 24.11.2010
Ստորագրված է տպագրության **15.04.2026**
Տպաքանակ՝ 3968
Հասցեն՝ Գեղարքունիքի մարզ, ք. Վարդենիս, Վ Հակոբյանի 2/21

Գլխավոր խմբագիր՝
ՔՆԱՐ ՄԱՆՈՒԿՅԱՆ

Տպագրված է «ԳԻՆԴ» տպարան ՍՊԸ հրատարակչությունում
Խմբագրություն հանձնված նյութերը չեն գրախոսվում եւ չեն վերադարձվում, **Գ** նշանով նյութերը գովազդային հրապարակումներ են, որոնց համար խմբագրությունը պատասխանատվություն չի կրում:

«Ժողովուրդ» օրաթերթում հրապարակված նյութերը արտատպելիս կամ ընթացիկ մեջբերումներ անելիս պետք է պարտադիր գրառել հետեւյալ նախադասությունը. *«Շարունակությունը կարող եք կարդալ «Ժողովուրդ» օրաթերթի այսօրվա համարում»:*